«Գրիգոր Գալֆայի շինածն են՝ Սարայ – Պուրնուի հրկիզեալ պալատը, Տոլմա – Պահչէի հին պալատը, Պէյլէրպէյլիի հին պալատը, Արնավուտքէոյի թագուհեաց պալատը, Տէֆթէրթար – Պուրնուի պալատը, Թօփհանէի մզկիթը, Սէլիմիէի զօրանոցը, Փոդերանոցը, Տավուտ փաշայի զօրանոցը, Սպարապետի Դրան աշտարակը, Այնալը-գավագի քէօշկը, Սուլթան Մահմուտի գեղեցիկ Պէնտը, և այլն և այլն։

«Որդին Կարապետ, որ Գրիգոր Գալֆայի յաջորդեց, երեք Սուլթանի ծառայելու պատիւ ունեցաւ. Սուլթան Մահմուտի, Սուլթան Ապտիւլ-Մէճիտի և Սուլթան Ապտիւլ-Ազիզի։

«Կրնայ ըսուիլ թէ արդի ճարտարապետութեան արուեստն Օսմանեան կայսրութեան մէջ ծաղկեցընողներուն գլխաւորներէն մին եղաւ Կարապետ։

«Անոր կառուցած նշանաւոր շէնքերը մի առ մի չենք թուեր, որովհետև աչուընուս առջև կեցած են. այլ Հայոց ազգին երախտագիտութեան վրայ ունեցած իրաւանց գլխաւորներէն մի քանին կը յիշենք։

«Պէշիքթաշի եկեղեցին շինեց իւր ծախքովի և անոր եկամուտ կապեց իւր Իւսկիւտարի այգիներն և Իճատիէի ընդարձակ հողն, որոյ վրայ շէնքեր շինելու համար կայսերական հրովարտակ ստացաւ։

«Եէտի Գուլէի Հայոց Հիւանդանոցին ալ ընդարձակ և բարեբեր հող մը նուիրեց։

«Երուսաղէմայ Հայոց Ս. Յակոբայ վանքին ընդարձակ ագարակներ նուիրեց Եալովայի մօտ, և այլն և այլն։

«Իւր կենդանութեան ժամանակ օժանդակ առած էր իրեն իւր երկու որդիքը, Նիկողոս և Սարգիս պէյ, որոց երկուքն ալ Եւրոպիոյ մէջ լաւ ուսմունք առած էին, և Վեհ. Սուլթանին ճարտարապետի տիտղոսով պատուեցան։

«Նիկողոս Գալֆա ծաղիկ հասակին մէջ մեռնելով, Սարգիս պէյ միայնակ իւր հանճարեղ և անձնուէր աջակցութիւնը նուիրեց իւր հօրը։

«1866ին Կարապետ Գալֆա արդարոց մահուամբ վախճանեցաւ՝ իւր երկրին օգտակար մարդ եղած ըլլալու քաղցր գիտակցութեամբ. և Սուլթան Ապտիւլ Ազիզ ինքնակալն որ հօրն առաքինութիւններն և որդւոյն տաղանդն արժանապէս գնահատելով, Վսեմ Սարգիս պէյն իւր կայսերական շինուածոց և պալատանց ճարտարապետ անուանեց։

«Դեռ երիտասարդ և գրեթէ ծաղիկ հասակի մէջ, Վսեմ. Սարգիս պէյ արդէն այնպիսի շէնքեր շինած է, որք բաւական են դպրոցի մը կամ ամբողջ գերդաստանի մը փառք ըլլալու։

«Իրրև մասնաւոր անհատ, Սարգիս պէյ բարեսիրտ, առատաձեռն, ազնիւ և մարդասէր է։ Այս միջոցիս վեց հազարէն աւելի մարդ կաշխատցընէ ամեն օր, և երբէք իւր վեհանձնութեան դիմաց դժբաղդ մը ձեռնունայն ետ չէ դարձած։ Իւր գործերն յատուկ յօդուածի մը նիւթ պիտի ըլլան։

«Արուեստից պաշտպան և արուեստաւորաց քաջալերող է։

«Վերջապէս Պարոններուն այս արժանաժառանգ յաջորդն է, որ պատիւ ունեցաւ Այվազովսքի Մեծ Նկարիչը Վեհ. Սուլթանին ներկայացնելու։

«Եւ հիմա թէ որ տխրազգած միտքեր այնպէս դատին՝ թէ քանի մը մեծ անձնաւորութեանց վերայ քիչ երկար խօսեցանք կը պատասխանենք անոնց թէ՝ մարդիկ կան՝ որք իրենց Ազգին փառք են, և թէ գրչի մը պարտքն է զանոնք օրինակ ցուցնել այլոց»։

Մասիս, թ. 1653–4։

ԱԶԳԱՑԻՆ ԺՈՂՈՎ.

Երէկ (Մայիսի 2) ազգային ժողովը Ղալաթիա գումարուելով՝ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն իմաստալից ատենախօսութեամբ մը ժողովին սահմանադրական նոր շրջանը բացաւ։

Ն. Սրբազնութիւնը նախորդ շրջանին մէջ կատարուած գործողութեանց վրայ համառօտ ակնարկ մը ձգելով՝ և քանի մ՝ ամենակարևոր խնդրոց յաջող լուծում մ՝ ստացած ըլլալը մէջ բերելով՝ շնորհակալութիւն յայտնեց իրեն աջակից վարչական ժողովներէն, և յառաջիկայ շրջանին մէջ ալ ազգային դաստիարակութեան և սահման-

նորական օրինաց վերաքննութեան կենսական խնդիրներուն անհրաժեշտ ստիպողականութիւնը յայտնելով անոնց ալ անյապաղ կարգադրութիւնը յանձնարարեց ժողովին ։

Ի վերջոյ պատրիարքական ծանր, փափուկ և բազմազբաղ պաշտօնն ըստ արժանւոյն վարելու մասին իր անձնական տկարութիւնն արգելք ցուցնելով՝ խնդրեց որ երեսփոխանութիւնը նոր Պատրիարք մ՚ընտրէ իրեն տեղ ։

Այս առաջարկութիւնն համայն երեսփոխանաց դժգոհութիւն պատճառելով, միաձայնութեամբ չընդունուեցաւ ։

Յետոյ Ռուսինեան էֆէնտիի ատենապետութեամբ առժամանակեայ դիւան մը կազմուելով, խնդրոց կարգին համեմատ նախընթաց նստին ատենագրութիւնն և մայրաքաղաքիս մի քանի թաղերուն մէջ կատարուած երեսփոխանական ընտրութիւնները վաւերացան ։

Դիւանը Քաղաքական ժողովոյ կողմէ եկած գիր մի կարդաց, որով Քաղաքական ժողովն իր համարատուութեան տեղեկագիրը պատրաստած ըլլալը ծանուցանելով կը խնդրէր որ մինչև ներկայ ամսոյս վերջը նոր Քաղաքական ժողով մ՚ընտրուի, որպէս զի իր հրաժարմամբն ազգին վարչական գործերն երեսի վրայ չմնան ։

Յետոյ մայր դիւանին կազմութեան խնդիրը ձեռք առնուելով, անմիջապէս կատարելու կամ ուրիշ օր յետաձգելու վրայ բաւական վիճաբանութիւն եղաւ, և որոշուեցաւ որ անմիջապէս կատարուի, բայց քառորդ մը դադարում ըլլալով, նոյն միջոցին երեսփոխաններէն շատեր մեկնեցան և այս պատճառաւ ժողովն իր կանոնական մեծամասնութիւնը կորսնցնելով չկրցաւ պէտք եղած քուէից թիւը կազմել հետևաբար մայր դիւանին ընտրութիւնն յաջորդ նստին մնաց, որ գալ ուրբաթ օրը պիտի գումարի ։

Մասիս.

ՊՕԼՍՈՅ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԺՈՂՈՎՈՅ
ՆՈՐԸՆՏԻՐ ԴԻՒԱՆ.

Երէկ (Մայիս 9 – Ազգային ժողովն) իր Բ. նիստն ըրաւ ի Ղալաթիա ի ներկայութեան 43 երեսփոխանաց ։

Ըստ ներքին կանոնագրութեան ատեանը բացուեցաւ և նախընթաց նիստի ատենագրութիւնը ընդունուելէն ետքը՝ Իւսկիւտարի Նէիփմահալէսի թաղէն և Կարնոյ ու Եւդոկիոյ գաւառներէն ընտրուած երեսփոխանները վաւերացան ։

Յետոյ օրակարգին անցնելով ընտրուեցան

Ստեփան փաշա	Ատենապետ		քուէ	29
Ռուսինեան	էֆ. դերատենապետ		.	23
Քրիստոստուր ,,	,,		.	20
Արամաճեան ,,	Ատենադպիր	Ա.	.	31
Գարեգին ,,	,,	Բ.	.	18
Պառնասեան ,,	,,	Գ.	.	14

Ատեանը վերցաւ 15 օրէն գումարուելու պայմանաւ ։

Մամուլ.

ՍՈՎ. ԵՒ ՏԱՌԱՊԱՆՔՆ.

Տակաւին ծանրացած է սովը փոքր Ասիոյ վրայ կշարունակէ իր աղէտքը, և գաւառներէն հասած վերջին տեղեկութիւնք տխուր են և տրտմալի ։

Տակաւին բազմաթիւ ազգայինք օգնութեան աղաղակներ կբարձրացունեն, և զգայուն հոգիներն կխռովեն ։

Եօզղատ՝ դեռ ևս կտագնապի, համաճարակ հիւանդութիւնք և չքաւորութիւնք սովուն կյաջորդեն. գարնան եղանակին հետ բերքերն կուշանան, և ժողովուրդը ձեռնտուութեան կարօտ կըլլի ։

Այս վիճակին թեմերէն մանաւանդ Էքրէք, Սըվըըն և Կիւկի գիւղօրէից բնակիչք արդէն աղքատիկ՝ այս աղէտին երեսէն բոլորովին կը չքանան գրեթէ, և հազարէն աւելի ազգայինք թշուառութեան կմատնուին ։ Մերձակայ Նալլըխան գիւղը իր 150 տուն հայ բնակիչներովն աղետից ներքև կհեծէ, և անցեալ տարուան վրայ հացը թէև գիւրագին՝ բայց հասարակութիւնը զայն առնալու համար ոչ դրամ ունի, և ոչ գործ՝ վաստկելու, և ատտանդական կթափառի խոտարմատ ուտելու համար ։

Եւդոկիոյ մէջ, ամենէն աւելի կարօտ 321 հայ ընտանիք թէև նպաստ ընդունած են, սակայն այս նպաստը հազիւ քանի մ՚օր զանոնք կրցած է սփոփել, և վաղանցուկ բարւոքում մը յառաջ բերելէ ետև՝ ժողովուրդը մի և նոյն թշուառութեան մէջ ինկած է. ինչպէս նաև նոյն վիճակի թեմերէն Զիլէ, որ աղքատութեամբ կտառապի և օգնութիւն կը հայցէ ։

Առաւել վշտագին և ողբալի կացութեան մէջ կգտնուի Պիլէճիկ՝ իր շրջակայ Աարըրգ, Մուրատչայ, Չայգարայ, Թիւրքմէն, Նոր գիւղ, և Կէօլատաղ գիւղերովն ։ Մահուան վտանգն անխուսափելի դարձած է՝ եթէ գթութիւնն իր փրկաւէտ ձեռքերն չերկարէ անոնց ։ Այդ կողմերէն փախստեայ քանի մը սովարեկեալք տեսնուեր են մայրաքաղաքիս մէջ՝ օգնութիւն առնալու